

Հաստատված է
Երևան քաղաքի ավագանու՝
«Հանրապետական կուսակցություն»
Խմբակցության նիստում
Ղեկավար՝ Ս. Մկրտչյան

08 հունիսի 2013թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևան քաղաքի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության

Երևան 2013 թ.

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Երևան քաղաքի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցությունը, այսուհետ՝ խմբակցություն, ստեղծվում է նորընտիր ավագանու առաջին նստաշրջանի բացման օրը՝ հետևյալ սկզբունքին համապատասխան.

ավագանու անդամների մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի առաջադրմամբ ընտրված ավագանու անդամներն ընդգրկվում են նույնանուն խմբակցություններում:

1.2. Խմբակցությունը առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, սույն կանոնադրությամբ, այլ օրենքներով և իրավական ակտերով:

1.3. Խմբակցության նպատակն է համախմբել խմբակցության անդամներին: Իր կողմից կատարված աշխատանքների միջոցով աջակցել ավագանու գործունեությանը՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան:

1.4. Խմբակցության անվանումն է՝ «Հանրապետական կուսակցություն» խմբակցություն:

1.5. Խմբակցությունը կարող է դիմել ՀՀ վարչական դատարան ավագանու և քաղաքապետի ակտերի իրավաչափությունը վիճարկելու հարցով:

2. Խմբակցության կառավարումը

2.1. Խմբակցությունը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և խորհրդակցությունների միջոցով:

2.2. Ավագանու անդամը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով խմբակցության ղեկավարին:

2.3. Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից, և վերականգնվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունն ունեցող ավագանու առնվազն մեկ անդամ:

2.4. Խմբակցության կազմի փոփոխության, ինչպես նաև գործունեության դադարման և վերականգնման մասին գրավոր տեղեկացվում է քաղաքապետին կամ ավագանու նիստը վարողին, որն այդ մասին հայտարարում է ավագանու առաջիկա նիստում:

3. Խմբակցության նիստը

- 3.1. Խմբակցության ղեկավար մարմինը խմբակցության նիստն է:
- 3.2. Խմբակցության նիստում Երևան քաղաքի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամների կազմից ընտրվում են խմբակցության ղեկավար և քարտուղար:
- 3.3. Նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են խմբակցության անդամների կեսից ավելին: Նիստում որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ:
- 3.4. Խմբակցության նիստերը տեղի են ունենում ավագանու հերթական նիստերի օրը, ավագանու նիստից առաջ:
- 3.5. Արտահերթ նիստը հրավիրում է խմբակցության ղեկավարի կամ խմբակցության անդամների կամ 1/3-ի նախաձեռնությամբ:
- 3.6. Նիստը վարում է խմբակցության ղեկավարը, իսկ նրա բացակայության դեպքում խմբակցության քարտուղարը:

4. Խմբակցության ղեկավարը

- 4.1. Խմբակցության ղեկավարը կազմակերպում է խմբակցության գործունեությունը, նախապատրաստում է նիստերի անցկացումը, վերահսկում է խմբակցության որոշումների և հանձնարարականների կատարումը:
- 4.2. Իր հայեցողությամբ խմբակցության քննարկման է ներկայացնում խմբակցության անունով ստացված դիմումները և առաջարկությունները:
- 4.3. Խմբակցության ղեկավարը կամ նրա կողմից լիազորված խմբակցության անդամը ներկայացնում է խմբակցությունը, Երևան քաղաքի ավագանու նիստերում, Պետական Կառավարման մարմիններում, հասարակական, հասարակական-քաղաքական և այլ կազմակերպություններում, խմբակցության գործունեության հետ կապված ցանկացած այլ փոխհարաբերություններում և զանգվածային լրատվության միջոցների հետ հարաբերություններում:
- 4.4. Անհրաժեշտության դեպքում խմբակցության ղեկավարը Երևան քաղաքի ավագանուն տեղեկատվություն է ներկայացնում խմբակցության գործունեության վերաբերյալ:
- 4.5. Տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ խմբակցության անդամներին:
- 4.6. Խմբակցության ղեկավարը ժամկետային պայմանագրով աշխատանքի է ընդունում խմբակցության գործավարին և փորձագետին՝ տալով համապատասխան հանձնարարություններ, և նրանք պարտավոր են աջակցել Երևան քաղաքի ավագանու աշխատանքներին:
- 4.7. Խմբակցության ղեկավարը խմբակցության անդամների հետ համատեղ քննարկում և որոշում է մշտական և ժամանակավոր հանձնաժողովների կազմավորման հարցը:

5 Խմբակցության քարտուղարը

- 5.1. Խմբակցության քարտուղարը, խմբակցության ղեկավարի բացակայության դեպքում կամ վերջինիս լիազորմամբ կատարում է նրա լիազորությունները:
- 5.2. Խմբակցության քարտուղարը կազմակերպում է Խմբակցության գործավարությունը, նիստի օրակարգը, նիստերի արձանագրությունները, անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստումը և դրանց պահպանումը:
- 5.3. Խմբակցության դիրքորոշման հիման վրա նախապատրաստում է խմբակցության և նրա ղեկավարի անունով ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների պատասխանները:
- 5.4. Վարում է խմբակցության անդամների Երևան քաղաքի ավագանու նիստերին մասնակցության հաշվառումը:

6. Խմբակցության անդամը

- 6.1. Խմբակցության անդամը պարտավոր է մասնակցել խմբակցության նիստերին, իսկ բացակայության դեպքում՝ այդ մասին նախապես տեղյակ պահել խմբակցության ղեկավարին /քարտուղարին/ :
- 6.2. Խմբակցության անդամը պարտավոր է կատարել խմբակցության կանոնադրության պահանջները:
- 6.3. Երևան քաղաքի ավագանու նիստերից բացակայելու դեպքում պարտավոր է դրա պատճառների և իր գտնվելու վայրի մասին տեղյակ պահել խմբակցության ղեկավարին /քարտուղարին/ :
- 6.4. Հայտնում է իր դիրքորոշումը խմբակցության նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ :
- 6.5. Քվեարկությամբ մասնակցում է որոշումների ընդունմանը:
- 6.6. Խմբակցության անդամի անդամությունը դադարում է՝
 - ա) նրա դիմումի համաձայն,
 - բ) եթե դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, խմբակցության անդամի ֆիզիկական անձը ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած,
 - գ) եթե պարբերաբար խախտել է սույն կանոնադրության պահանջները կամ չի կատարել խմբակցության նիստի որոշումները: